ԵՐԵՎԱՆԻ Հ. 110 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – գնդապետ՝ Եսայան Սիմոն

Ղեկավար – փոխգնդապետ Ա. Իսահակյան

Թեմա – Զինղեկի կողմից ուսուցման պլանավորումը առարկայական չափորոշիչներին համապատասխան։

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

§ Ջինղեկի կողմից ու սու ցման պ անավորու մը առաքկպ ական չ ափորոշիչ ներին համապատասխան.....3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում դպրոցականների ինքնազարգացման և ստեղծագործական կարողությունների համակարգման հարցերը խիստ արդիական նշանակություն ունեն: Կրթության որակի բարձրացումը և այն մրցակցային հարթակի վրա պահելը բոլոր ժամանակների գերխնդիրներից են եղել և կան: Այսօր ուսուցչի առջև ծառացել է նոր մարտահրավեր՝ հետաքրքիր և գրավիչ դարձնել կրթությունը 21-րդ դարի աշակերտի համար: Սա այդքան էլ հեշտ լուծելի խնդիր չէ, որքան երևում է առաջին հայացքից: Այսօր գրեթե բոլոր կրթական բնագավառները ունեն աշակերտին ներգրավված պահելու և նրա հետաքրքրությունը շարժելու խնդիր: Քանի որ մենք գործ ունենք տեղեկատվական ամենալայն ցանցից անխափան օգտվող սերնդի հետ, ապա նրանց տեղեկությամբ զարմացնելն ու փաստերը բերելը դեռ քիչ է: Ելնելով նշված հանգամանքից պարզ է դառնում, որ կրթության բոլոր բնագավառներում, այդ թվում և ՆԶՊ դասաժամերին հաջողված աշխատանքի գրավականը ստեղծագործական մոտեցման զարգացումն է թե՛ ուսուցչի և թե՛ աշակերտի մոտ:

Լինել ստեղծագործ և նորարար բավականին բարդ է, սակայն հետաքրքիր և գրավիչ: Հաշվի առնելով արդի տեխնիկական, կապային և մյուս բոլոր աջակցող գործոնները ստեղծագործական մոտեցման զարգացման համար բավական կլինի միայն թույլ տալ երևակայությանը ճախրել: Սա առաջին հերթին պետք է կատարի ուսուցիչը, ապա իր իսկ օրինակով ոգեշնչի և ուղղորդի նաև աշակերտներին՝ լինել ստեղծագործ իրենց ուսման ոլորտում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար:

Կրթության ժամանակակից հասկացությունների հիմնական խնդիրը քաղաքացիության և հայրենասիրության դաստիարակությունն է, որի առանցքը երիտասարդներին հայրենիքի պաշտպանությանը, զինվորական ծառայությանը նախապատրաստելու և կենսագործունեության անվտանգության անհրաժեշտությունն է:

§ Զինղեկի կողմից ուսուցման պլանավորումը առարկայական չափորոշիչներին համապատասխան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

-Հաշվի առնելով արդի ժամանակներում միջազգային և տարածաշրջանային զարգացումները և, դրա հետ կապված, այս առարկայի կարևորությունը, ինչպես և ստացած գիտելիքների՝ զինծառայության ընթացքում գործնական կիրառման հնարավորությունը՝ անհրաժեշտ է ուսուցման գործընթացի արդյունավետ համակարգի կիրառում ինչպես մեթոդաբանության, այնպես էլ ժամանակակից տեխնոլոգիաների (ուսուցողական նյութի դիտարժան ներկայացման տեխնիկական ու ծրագրային միջոցների) կիրառման տեսանկյունից: Որոշակիորեն կարող են կիրառվել ինչպես հարցադրումների միջոցով խնդիրների ներկայացումը, սովորողների մտածողության ակտիվացումը, նրանց մոտ հետաքրքրության առաջացումը կոնկրետ թեմայի և առարկայի վերաբերյալ, այնպես էլ սովորողների առանձին խմբերի միջև մրցակցության նախաձեռնումը, գիտելիքների ընկալման, յուրացման և ունակությունների դրսևորման ներքին շարժառիթների ստեղծումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գործնական վարժանքներին, քանի որ մարտական իրավիճակում շատ կարևոր է զինվորի գործողությունների հղկումը մինչև դրանց ինքնաբերաբար իրականացումը:

-Պարապմունքների ձևի ընտրությունը կախված է դպրոցում առկա ուսումնական բազայից, նյութատեխնիկական ապահովվածությունից, դպրոցի տեղակայման վայրից (քաղաքային կամ գյուղական վայր), շեֆ-զորամասից եղած հեռավորությունից, օրվա և տարվա եղանակից, բնական միջավայրից (տեղանքից):

-Այս առումով ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում նպատակահարմար է կիրառել ուսուցման գործընթացի մի շարք սկզբունքներ և տեսակներ:

-Ուսուցման գործընթացը պետք է դաստիարակող և զարգացնող բնույթ ունենա: Այն ներառում է երկու տարբեր, սակայն փոխկապակցված գործոններ.

1) ուսումնական նյութի յուրացման արդյունքն է ներքին շարժառիթների ձևավորումը մասնավորապես հայրենասիրական թեմաների շնորհիվ, ինքնավստահության առաջացումը արհեստավարժության տարրերի յուրացման շնորհիվ և այլն,

2) զինվորական ղեկավարի անմիջական ներգործության արդյունքն է: Շատ կարևոր է սովորողների գիտելիքների և կարողությունների արդարացի գնահատումը: Առանձին իրավիճակներում զինղեկը կարող է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսին են տեղեկացումը, համոզումը, հոգեբանական կառուցողական ներգործությունը:

-ՆԶՊ առարկայի դասավանդման ողջ ընթացքում զինվորական ղեկավարը և ուսուցման անցկացման մեջ ներգրավված ողջ մանկավարժական կոլեկտիվը սովորողների շրջանում պետք է ձևավորեն մի այնպիսի մթնոլորտ, որ ուսումնական գործընթացի նկատմամբ վերջիններս ցուցաբերեն բարձր գիտակցություն և դրսևորեն անհրաժեշտ ակտիվություն (ներքին դրդապատճառներ և գիտակցված կարգապահություն):

-ՆԶՊ առարկայի ուսուցումը, հայրենիքի ապագա պաշտպանի բազմակողմանի նախապատրաստումը պետք է մեծ կարևորություն ունենան սովորողի, վերջինիս ծնողների և, ընդհանրապես, հասարակության համար: Աշակերտների մոտ այս ամենի ձևավորման համար անհրաժեշտ է տանել ինչպես համապատասխան բացատրական աշխատանքներ, այնպես էլ կիրառել բարոյական և նյութական որոշակի խթաններ: Ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում սովորողին պետք է ներշնչել այն հիմնական գաղափարը, որ ճգնաժամային իրավիճակում ՆԶՊ առարկայից ստացած գիտելիքներն ու կարողությունները կփրկեն իր և ընկերների կյանքը, հնարավորություն կտան դրսևորելու իրեն դժվարագույն իրադրություններում՝ որպես քաջ, օրինակելի քաղաքացի ու մարտիկ: Միաժամանակ, այն շատ բան է տալիս անձի համակողմանի զարգացման տեսանկյունից:

-.Նյութի ուսումնասիրումն ու յուրացումը նպատակահարմար է իրականացնել պարզից դեպի բարդ մեխանիզմով: Ցանկացած բարդ գործողություն նախապես պետք է վերածել պարզի, հասարակի, հիմնային տարրերի: Դրանցից յուրաքանչյուրի յուրացումից (սկզբում մտածված, դանդաղ, բայց ճիշտ կատարումից, բազմակի կրկնումից հետո) անցում է կատարվում դրա ավելի ու ավելի արագ կատարմանը, այնուհետև դրանք փոխկապակցելով և գործողությունը բարդացնելով՝ յուրացվում է ամեն հանգույց և վերջում կատարվում ամբողջական գործողությունը: Յուրաքանչյուր նման գործողություն անհրաժեշտ է փորձարկել և

հղկել իրականին մոտ պայմաններում այնքան ժամանակ, մինչև դրանք կատարվեն ինքնաբերաբար:

-ՆԶՊ առարկայի ուսուցումը 8-րդ դասարանում տրվում է պարզ, հիմնային գաղափարների և կարողությունների միջոցով, որոնք հաջորդ դասարաններում ավելի ու ավելի հղկվում են ընդհանրական գործողությունների ձևով:

-Ցածր դասարաններում ավելի շատ ուշադրություն է դարձվում անհատական պատրաստությանը, իսկ բարձր դասարաններում, հենվելով դրա վրա, խմբային (ջոկային) պատրաստվածությանը: Այստեղ կարևորվում է ջոկի անդամների փոխգործողությունը:

-Նյութի մատուցումն այստեղ սկսվում է փոքր ծավալից դեպի ավելի ու ավելի մեծ ծանրաբեռնվածություն:

-Ուսուցման համար նախատեսված թեմաները պետք է ներկայացվեն և մեկնաբանվեն բազմակողմանի, առավելագույնս մատչելի, հետաքրքրաշարժ ձևերով ու մեթոդներով՝ դրա համար կիրառելով ժամանակակից համակարգչային և հեռահաղորդակցության միջոցները, տեսացուցադրման սարքերը և վարժամիջոցները: Որոշակի ձևաչափով ստեղծված տեսադասերն ու ուսուցողական լրացուցիչ տեսանյութերը կօգնեն ուսումնական թեման մատուցել առավել ամբողջական, ուսուցանվող գործողությունները ներկայացնել միանշանակ և ապահովել դրանց արդյունավետ յուրացումը ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:

-Ուսումնական գործընթացում տեսական դրույթները պետք է ոչ միայն փոխկապակցված լինեն գործնականի հետ, այլև յուրացվեն դրա օգնությամբ: Ավելին, առաջնայինն այստեղ պետք է լինեն սովորողների անձնային որակների զարգացումը, այս ոլորտում որոշակի գործնական կարողությունների ձեռք բերումն ու հմտությունների զարգացումը:

-Վերջնարդյունքում (դրա հերթական փուլի՝ ուսումնական տարվա արդյունքում) պետք է ստացվեն հետևյալ արդյունքները.

-սովորողների մոտ ռազմագիտության առավել ընդհանուր դրույթների, ինչպես նաև դրա առանձնահատուկ (իրավական, տեխնիկական և այլն) ոլորտների, ԶՈՒ և տարբեր զինատեսակների մասին պետք է ձևավորվեն որոշակի պատկերացումներ:

- աշակերտները պետք է ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքներ, որոնք կօգնեն ոչ միայն յուրացնել ծրագրով ներառված թեմաները, այլև հասկանալ ռազմագիտության կարևորագույն դրույթները և դրանք կիրառել անհրաժեշտության դեպքում:

- ՆԶՊ և հարակից առարկաների օգնությամբ աշակերտները պետք է ձեռք բերեն որոշակի կարողություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ ինչպես հետագա զինծառայության ընթացքում, այնպես էլ առօրյա կյանքում դրսևորելու իրեն որպես արժանի զինծառայող և քաղաքացի:

- ՆԶՊ առարկայի ուսուցման ընթացքում աշակերտների մոտ պետք է ձևավորվեն որոշակի հմտություններ, որոնք կօգնեն նրան մարտական կամ այլ բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլև արագ ու վստահ, բարձր արդյունավետությամբ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ:

-.Գիտելիքների մատուցումը, կարողությունների ձևավորումը և հմտությունների զարգացումը պետք է համակարգված և հետևողական բնույթ կրեն: Դրա իրացման տեխնոլոգիան ենթադրում է գործողությունների հետևյալ հաջորդականությունը.

1) սովորողը պետք է սկզբում պատկերացում կազմի նյութի մասին,

2) դրա ամբողջական բացահայտման, պարզաբանման արդյունքում ձևավորվի ընդհանրական գիտելիքը,

3) գիտելիքի գործնական կիրառման արդյունքում ձևավորվեն սովորողի որոշակի մտային և գործնական կարողությունները,

4) հատուկ վարժանքների շնորհիվ գործնական կարողությունների բազմակի կիրառման արդյունքում դրանք կզարգացվեն նրա մոտ որպես հմտություններ:

-Եթե սովորողի մոտ թեմայի վերաբերյալ պատկերացում կազմելու, որոշակի գիտելիքների ձեռք բերման համար նպատակահարմար է նյութի մշտական, բազմակի և բազմաձև մատուցումը, ապա որոշակի կարողությունների ճիշտ ձևավորման և հմտությունների զարգացման համար ճիշտ է ուսուցանվող հնարքների և այլ գործողությունների սկզբում դանդաղ, հետո ավելի ու ավելի արագ իրականացումը, իսկ վերջնական ամրապնդման համար դրանց իրականացումը մարտականին մոտ պայմաններում:

-Ուսուցման գործընթացի առավել արդյունավետ իրականացման համար նպատակահարմար է դպրոցական ծրագրով հարակից առարկաներում խորացված

ուսումնասիրել առանձին թեմաներ՝ դրանց տալով ռազմագործնական կիրառման ուղղվածություն:

-Նյութը պետք է մատուցվի դիտարժան և հարուցի սովորողների անսքող հետաքրքրությունը: Այն պետք է լինի նաև մատչելի:

-Ելնելով այն բանից, որ դասարանը, որպես կանոն, միատարր չի լինում, կան ընկալունակության տարբեր մակարդակ և դոմինանտ ընկալունակություն ունեցող անձինք,զինղեկը պետք է նյութի ներկայացման ժամանակ հենվի և՛ տրամաբանական փաստարկներին, և՛ զգացմունքային գործոնին միաժամանակ նյութը մատուցի գրաֆիկական պատկերների (գծապատկերների, նկարների) օգնությամբ, անմիջական ցուցադրմամբ: Բավական արդյունավետ կարող է լինել ուսուցման տարբեր մեթոդների զուգակցված կիրառումը: Որպես այդպիսիք կարելի է նշել հետևյալները.

1) ցուցադրման մեթոդը,

2) պատմողական մեթոդը,

3) հարցադրումների մեթոդը,

4) զրույցի մեթոդը,

5) վարժանքների մեթոդը,

6) իրադրության խաղարկման մեթոդը,

7) խմբային և անհատական ինքնապատրաստման մեթոդը:

-Դաշտային (ճամբարային) պարապմունքներ: Այս պարապմունքները հնարավորություն են տալիս իրականին մոտ պայմաններում մատուցել նյութը, ցուցադրել պահանջվող գործողությունները, իսկ սովորողներին՝ գործնական վարժանքների ձևով յուրացնել թեման: Բացի երկարաժամկետ ճամբարային փորձաշրջանից նպատակահարմար է կազմակերպել դաշտային պարապմունքներ շաբաթ կամ կիրակի օրերին՝ աշակերտների և ծնողների համաձայնությամբ, դպրոցի ղեկավարության հետ համաձայնեցված:

-Շեֆ-զորամաս այցելությունը: Այն հնարավորություն է տալիս սովորողներին անմիջականորեն ծանոթանալ բանակային առօրյային, մարտական տեխնիկային, սպառազինության տեսակներին և անձնակազմի մարտական պարապմունքներին:

-Արտադասարանական խմբակների կազմակերպումը: Շատ արդյունավետ է դպրոցներում արտադասարանական «Պատանի հետախույզ», «Պատանի լեռնագնաց» և այլ խմբակների ձևավորումը, դրանց մեջ տարբեր տարիքային խմբերի

աշակերտների ներառումը: Դրանք հնարավորություն են տալիս ապահովել կարգապահություն, ինտենսիվ ուսուցում: Խմբակների մասնակիցները իրենց վարժվածությամբ, գիտելիքներով, կարգապահությամբ, օրինակ կհանդիսանան համադասարանցիների համար: Նրանցից ամենակազմակերպվածներին կարելի է նշանակել դասարանական ուսումնական ջոկերի (դասակների) հրամանատարներ:

Ուսուցման պլանավորումը չափորոշիչներին համապատասխան

Պլանավորումը մանկավարժական աշխատանքների կազմակերպման կարեւորագույն սկզբունքներից է: Նախնական զինվորական պատրաստության պլանավորման հիմնական սկզբունքներն են՝

-ուսուցման գործընթացի կազմակերպումը եւ ուսումնադաստիարակչական խնդիրների իրականացումը ՆԶՊ ուսումնական ծրագրի համապատասխան.

-յուրաքանչյուր դասի նախօրոք եւ մանրակրկիտ նախապատրաստում.

-մանկավարժական կոլեկտիվների հետ փոխգործակցության ապահովում.

– յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության վերահսկողություն՝ համաձայն ուսումնական ծրագրի:

Փորձը ցույց է տալիս, որ զինղեկին բաժին է հասնում զգալի թվով պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանք: Առաջին խմբի մեջ են մտնում ժամահաշվարկը, շաբաթական պլանը, թեմատիկ հեռանկարային պլանը, դասավանդման պլանը: Երկրորդ խմբի մեջ կարող են մտնել մյուս բոլոր ծրագրերը, որոնք կապված են ՆԶՊ առարկայի, ռազմահայրենասիրական աշխատանքների հետ: Պլանավորման հետ միասին, ուսումնական գործընթացի կարեւոր տարրերից է համարվում սովորողի կանոնավոր հաճախումը դասին, վարքը, մասնակցությունը գործնական պարապմունքներին:

Պլանավորումը և հաշվառումը բարդ և ժամանակատար աշխատանք է, որն էլ զինղեկից պահանջում է հմտություն եւ համապատասխան գիտելիքներ:

Հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկը.

1. պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան.
2. ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.
3. բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները.
4. նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ.
5. սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները.
6. նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը.
7. հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.
8. հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.
9. համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.
10. համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.
11. մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին.
12. պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

Փորձը ցույց է տալիս նաեւ, որ առավել նպատակահարմար է փաստաթղթերը պլանավորել հետեւյալ հերթականությամբ.

1.Ժամահաշվարկ,

2.Շաբաթական պլան,

3.Թեմատիկ հեռանկարային պլան,

4.Պարապմունքի պլան, պլան կոնսպեկտը:

Ժամահաշվարկը բաղկացած է մի քանի փոխկապակցված աղյուսակներից: Առաջինը պարունակում է ուսումնական ժամերի բաշխումը կիսամյակի համար: Երկրորդը՝ կիսամյակային ուսումնական ժամերի քանակը առանձին բաժինների ուսումնասիրմամբ՝ կախված դասաժամերի քանակից, զինղեկի ծանրաբեռնվածությունից:

Ժամահաշվարկի համար անհրաժեշտ է քաղվածք ուսումնական պլանից, տեղեկություններ սովորողների կազմի, թվի մասին: Նպատակահարմար է ժամահաշվարկը կազմել մինչեւ շաբաթական պլանը նախապատրաստելը: Շաբաթական պլանը կազմվում է՝ հաշվի առնելով ներառարկայական եւ միջառարկայական առնչությունները, թեմաների անցկացման հերթականությունը:

Դասացուցակը ցույց է տալիս պարապմունքների քանակը ըստ շաբաթների՝ համաձայն ուսումնական պլանի: Զինղեկն ընդհանուր դասացուցակի քաղվածքի հիման վրա մշակում և կազմում է ՆԶՊ դասացուցակ շաբաթվա, ամսվա, կիսամյակի համար, որն էլ փակցվում է ՆԶՊ լսարանում:

Հեռանկարային թեմատիկ պլանը, ի տարբերություն շաբաթականի, ընդգրկում է դասերի մանրամասն գրառումները, որոնք ներառում են յուրաքանչյուր դասի ուսումնադաստիարակչական նպատակը, մեթոդական բնութագիրը, ներառարկայական կապը, նյութական ապահովվածությունը եւ այլն: Հեռանկարային թեմատիկ պլանի կազմումը չի պահանջում յուրաքանչյուր դասի մանրամասն պլանավորում:

Դասի պլանը կազմելիս զինղեկը օգտագործում է հեռանկարային թեմատիկ պլանը, որից տվյալ դասի համար վերցնում է ուսումնա-դաստիարակչական ուղղվածությունը, ուսումնական հարցերը, դասի անցկացման մեթոդաբանությունը՝ նշելով անհրաժեշտ օժանդակ նյութերը և այլն:

Ի տարբերություն ընդհանուրի՝ անհատական պլանը մշակվում է այն միջոցառումների հաշվառմամբ, որոնք անցկացվում են ոչ դասարանային պարապմունքի ժամանակ:

Եզրափակելով՝ հարկ է նշել, որ զինղեկի մշակած պլանավորման փաստաթղթերը մեծ օգնություն են դպրոցներում անցկացվող ուսումնական աշխատանքներին: Մի կարեւոր գործընթաց, որի արդյունքում հաշվառվում եւ վերահսկվում է ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը:

Նախնական զինվորական պատրաստության /ՆԶՊ/ և անվտանգ կենսագործունեության առարկայական չափորոշիչների մշակման համար հիմք են ծառայել «Զինապարտության մասին» ու «Կրթության մասին» ՀՀ օրենքների պահանջները պատանիներին ՀՀ զինված ուժերում ծառայության նախապատրաստելու վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ հանրակրթության պետական կրթակարգի և միջնակարգ կրթության չափորոշիչների սկզբունքները և ՀՀ պաշտպանության նախարարության երիտասարդ զինվորի նախնական զինվորական պատրաստության ծրագրի չափորոշիչները: ՆԶՊ առարկայի նպատակն է տասներկուամյա միջնակարգ կրթության շրջանակներում և այլընտրանքային, տարամեթոդ դպրոցների առկայության պայմաններում պատանիներին ու աղջիկներին զինել ՆԶՊ և անվտանգ կենսագործունեության գիտելիքներով:

Զինղեկի առաջնահերթ խնդիրն է պատրաստել Հայրենիքը պաշտպանելու պատրաստ, բազմակողմանի զարգացած պատանիներ, հնարավորություն ընձեռնել պատանիներին բանակ զորակոչվելուց հետո կարճ ժամանակում տիրապետել ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային:

ՆԶՊ –ի և անվտանգ կենսագործունեության առարկայի ծրագրի առանձին բաժինները՝ լինելով իրարից բավականին անկախ, ուսուցման ընթացքում թույլ են տալիս կատարել թեմաների ուսուցման հերթականության փոփոխություններ՝ կախված տվյալ դպրոցի ուսումնական բազայի վիճակից, դպրոցի տեղակայման վայրից, քաղաքում թե գյուղում, լեռնային թե հարթավայրային շրջանում, շեֆ զորամասի հեռավորությունից, օրվա և տարվա եղանակից: Ուստի ՆԶՊ առարկայի դասավանդման համար պահանջվում է մանրակրկիտ պլանավորում՝ ծրագրի թեմաները հաջորդականությամբ անցնելու համար: Դա անպայման պետք է զինղեկը

նկատի ունենա ուսումնական տարվա շաբաթական պլանը կազմելիս: Ուսումնական ծրագրով առարկային հատկացված 170 ժամը բաշխվում է հավասարապես /34-ական ժամ/ 8-րդ, 9-րդ, 10—րդ, 11-րդ և 12-րդ դասարանների միջև: Առարկայի խնդիրներ լուծելու համար օգտագործում են ուսումնական գործունեության բոլոր տեսակները՝ ուսումնական նյութի բացատրում, ցուցադրում, պատրաստում, տեղանքի ուսումնասիրում, նկարների, ուսումնական ֆիլմերի ցուցադրում, դիտում, քննարկում, չափողական, գործնական աշխատանքները տեղանքում, ուսումնական զենքի, նռնակների ականների օգտագործում, շարային վարժաձևերի կատարում, բաժնեչափական, քիմիական հետախուզական սարքերի ցուցադրում, կողմնացույցերով և տեղական քարտեզներով խնդիրների լուծում, գրավոր աշխատանքների կատարում, գրավոր և բանավոր հարցումներ, համակարգչային ծրագրերի օգտագործում, անհատական և խմբային ջոկի կազմով պարապմունքների և աշխատանքների կատարում:

Յուրաքանչյուր դասի համար կազմվում է պլան: ՆԶՊ դասերը պլանավորվում նե յուրաքանչյուր դասարանի համար շաբաթական 1 ժամ: Զինղեկը յուրաքանչյուր դասի անցկացման համար, ելնելով իր կողմից կազմված թեմատիկ պլանի, պետք է նախօրոք ապահովի ուսումնական ձեռնարկների, տեխնոլոգիաների և այլ դիդակտիկ նյութերի օգտագործումը:

Զինղեկի կողմից կազմված դասի պլանում պետք է նշվի դասի թեման, պարապմունքը, ուսումնական նպատակը, ժամանակը և տեղը, ուսումնական հարցերը, պարապմունքի անցկացման մեթոդը:

Աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար չեն բացառվում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Յուրաքանչյուր դաս, յուրաքնչյուր դասարան տարբեր է, հետևաբար մի դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Ուսումնական գործընթացում աշակերտների ակտիվությունը բաղկացած է գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացումից: Ուսուցման

գործընթացը դիտարկվում է կրթության գործընթացի հետ միասնության մեջ: Սա նշանակում է, որ աշակերտների մոտ զարգացնում են ոչ միայն առարկայի գիտելիքները, հմտությունները և կարողությունները, այլ նաև զարգացնում են ճանաչողական կարողությունները, ինքնուրույն աշխատելու կարողությունը:

Գիտելիքի ձեռքբերումը սկսվում է ընկալումից, բայց չի սահմանափակվում դրանով: Աշակերտների կողմից ընկալվող նյութը մշակվում է նրանց մտքում, ընկալվում նրանց կողմից, և միայն բովանդակալից գիտելիքները կարող են օգտագործվել գործնական գործունեության մեջ:

Զինվորական գործի հիմքերի կապը կյանքի հետ աշակերտների նախնական զինվորական գիտելիքների գիտակցված յուրացման, նրանց ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական միջոցն է: Ճանաչողության գործընթացում անհրաժեշտ քայլ է պրակտիկան՝ որպես ճշմարտության աղբյուր և չափանիշ:

Ժամանակի հրամայականը

Նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

ՆԶՊ-ի պարապմունքների ժամանակ իրադարձությունների զարգացման հիմնական ժամանակագրությունը պարզելուց հետո բազմաթիվ հարցեր են առաջանում: Հարցեր իրադարձությունների պատճառների, ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների, պատմական դերակատարների ու զարգացումների կարևորության մասին:

Ուսուցման ընթացքում տարբեր մեթոդներ կիրառելիս օգտագործվում են տարբեր հարցեր ու հարցադրումներ, որոնք նպատակ ունեն պարզելու սովորողների գիտելիքների ընդհանուր մակարդակը, ապահովելու մտքերի ու գաղափարների

ընկալումը, խթանելու նրանց ակտիվությունն ու ներգրավածությունը ուսուցման գործընթացում:

Բարեփոխումների ընթացքը կրթության համակարգում բազմաբևեռ գործընթաց է: Այս գործընթացի կարևոր մաս է կազմում ՆԶՊ կրթական ծրագրերի և չափորոշիչների ներդրումը դպրոցներում:

ՆԶՊ առարկայի ուսուցման հիմքում պետք է դրվեն ռազմագիտական մանկավարժության ուղեցույց սկզբունքները՝ սովորողների գիտակցականությունն ու ակտիվությունը, հետևողականությունը, մատչելիությունն ու համակարգվածությունը: Ուսուցման մեթոդների վրա էականորեն ազդում են նաև սովորողների կազմը, պատրաստվածությունը:

Ինչպես հայտնի է, ցանկացած առարկայից պարապմունքների ժամանակ դրվում է ուսումնական գործընթացի երեք հիմնական օղակներին համապատասխան երեք գլխավոր նպատակ՝

- գիտելիքների հաղորդում, ընկալում և իմաստավորում;
- ունակությունների և հմտությունների մշակում;
- գիտելիքների, ունակությունների և հմտությունների ամրապնդում ու կատարելագործում:

Առաջին նպատակին հասնում են գերազանցապես բանավոր շարադրման, ցուցադրման ու զրույցի մեթոդով, երկրորդին վարժությունների ու բացատրության, երրորդային կանոնադրությունների, ուսումնական ձեռնարկների և այլ նյութերի ինքնուրույն ընթերցանությամբ, ինքնուրույն մարզումներով:

Առաջադրված խնդիրների կատարումն ապահովում էէ նկատի ունենալով գլխավոր մեթոդական պահանջները՝ թեմաները և ուսումնական հարցերը մշակելիս՝ հաջորդականության պահպանումը, պարզից դեպի բարդը, հայտնիից՝ անհայտ գնալը:

Ուսումնական գործընթացի էությունը պարապմունքի ղեկավարի և սովորողների գործունեությունն է՝ որոշակի գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման նպատակով: Այս գործընթացում վճռորոշ է պարապմունքի ղեկավարի դերը:

Գիտելիքների յուրացման գործընթացը ճանաչողական գործունեություն է, որի ընթացքում սովորողներին ներարկվում են այնպիսի զգացողություն, ընկալում, պատկերացումներ, որոնցում արտացոլվում է ուսումնասիրվող առարկայի, երևույթի գլխավորապես արտաքին կողմը: Այս կերպ ուսումնասիրվող երևույթի մասին ստացած

տվյալներն ընդհանրացնելով՝ սովորողը թափանցում է առարկայի ու երևույթի էության մեջ: Հետևաբար, կարելի է ասել, որ գիտելիքները ոչ միայն հաղորդված նյութի մտապահումն են հիշողության մեջ, այլև դրա էության ըմբռնումը, որի հիման վրա էլ սովորողը կարող է ընդհանրացում ու գործնական եզրակացություն անել վարժաձևի կամ գործողության վերաբերյալ: Գիտելիքների հիման վրա մասնագիտական վարժությունների կատարման ընթացքում զարգանում են անհրաժեշտ ունակություններ ու հմտությունները:

Ունակությունը գիտելիքների կիրառումն է գործնականում, այսինքն՝ այս կամ այն գործողության կատարումը համապատասխան գիտելիքների կիրառմամբ:

Հմտությունը մեխանիկորեն կատարվող գործողություն է՝ հասցված այնպիսի կատարելության, երբ դա կատարվում է ճիշտ, արագ, առանց ավելորդ ջանադրության և չի պահանջում հիշել դրա գիտական հիմնավորումը: Հմտությունը մշակվում է մարզումների ընթացքում գործողությունների բազմաթիվ կրկնությամբ :

Փորձը ցույց է տալիս, որ ՆԶՊ առարկայի դասավանդման և ուսուցման բարձր մակարդակի կարելի է հասնել՝

- նպատակասլաց ու ճիշտ պլանավորմամբ, բոլոր պարապմունքների հստակ կազմակերպմամբ և մեթոդապես ճիշտ անցկացմամբ:
- յուրաքանչյուր պարապմունքի խոր ուսումնասիրմամբ և հետևողական կատարելագործմամբ՝
- կանոնավորապես կատարվող հրահանգամեթոդական, ցուցադրական ու պլանային պարապմունքների պարբերաբար անցկացմամբ՝ առանց երկարատև ընդմիջումների:
- Բոլոր պարապմունքների ժամանակ ուսուցման հմտությունների կատարելագործմամբ:

ՆԶՊ ծրագիրը դպրոցի զինղեկին իրավունք է վերապահում որոշելու ուսումնական հարցերի, թեմայի մշակման ժամանակը ըստ աշակերտների պատրաստվածության աստիճանի:

ՆԶՊ պարապմունքները ծառայում են նպատակին, երբ զինղեկը պլանավորում և նախապատրաստվում է հանգամանալից և նյութապես ապահովվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» /ՆԶՊ/ առարկայի ծրագրի նպատակն է զինվորական պատրաստության հիմունքներից նվազագույն գիտելիքների տիրապետող, գործնական կարողությունների ու հմտությունների միջոցով արտակարգ իրավիճակներում կենսաապահովում իրականացնող հասարակական բարձր գիտակցություն, բարոյահոգեբանական որոկներ և վարքային դրսևորումներ ունեցող, Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ անձի ձևավորումը:

Զինղեկի առաջնահերթ խնդիրն է պատրաստել Հայրենիքը պաշտպանելու պատրաստ, բազմակողմանի զարգացած պատանիներ, հնարավորություն ընձեռնել պատանիներին բանակ զորակոչվելուց հետո կարճ ժամանակում տիրապետելու ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային:

Փորձը ցույց է տալիս, ՆԶՊ առարկայի դասավանդման և ուսուցման բարձր մակարդակի կարելի է հասնել՝

- նպատակասլաց ու ճիշտ պլանավորմամբ՝ առարակայան չափորոշիչներին համապատասխան , բոլոր պարապմունքների հստակ կազմակերպմամբ և մեթոդապես ճիշտ անցկացմամբ:
- բոլոր պարապմունքների ժամանակ ուսուցման հմտությունների կատարելագործմամբ:

ՆԶՊ ծրագիրը դպրոցի զինղեկին իրավունք է վերապահում որոշելու ուսումնական հարցերի, թեմայի մշակման ժամանակը ըստ աշակերտների պատրաստվածության աստիճանի:

Ուսումնական գորընթացի կազմակերպման կարևոր տարրը պլանավորման հետ մեկտեղ աշկերտների հաճախելիության, առաջադիմության և վարքագծի հաշվառումն է դասարունում և գործնական պարապմունքներում: Պլանավորումը և հաշվառումը բարդ և աշխատատար գոծընթաց է, որը զինղեկից պահանջում է խորը գիտելիքներ և հմտություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր: 2007թ.
2. ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարար. Հրաման՝ հավելված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. մարտի 30-ի թ. 39-Ն հրաման:
3. ՀՀ կրթության և գիտության նախարարություն, կրթության ազգային ինստիտուտ «Հանրակրթական դպրոցի զինղեկ», Ձեռնարկ- ուղեցույց, Երևանբ 2010թ.